«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ , ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ -02.08.2006թ ԱՆԺԱՄԿԵՏ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ՝ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ՝ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Նոր Զովք» սահմանափակ պատասխանատվության ընկերության մասնակցին

Կարծիքից հրաժարում

Մենք հրաժարվում ենք կարծիք արտահայտել «Նոր Զովք» ՍՊԸ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտված համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Կարծիքից հրաժարման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցի նշանակալիության պատճառով մենք չենք կարողացել ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար հիմք կհանդիսանային աուդիտորական կարծիքի համար: Հետևաբար, մենք չենք արտահայտում կարծիք:

Կարծիքից հրաժարման հիմքերը

Ընկերության կողմից մեզ չեն տրամադրվել աուդիտի ենթարկվող ժամանակաշրջանի 2022թ.և2023թ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան պատրաստված տարեկան ֆինանսական հաշվետվությունները և ակտիվների ու պարտավորությունների 2023թ. տարեկան գույքագրման արդյունքները, ինչպես նաև 2023թ. դեկտեմբերի 31 ժամանակահատվածի, հաշվետու ժամանակահատվածին նախորդող 2022թ. և հաջորդող մինչև 2024թ. հունիսի 27-ը ժամանակահատվածին վերաբերող Ընկերության հաշվապահական հաշվառման ծրագրի անալիտիկ հաշվառման էլեկտրոնային բազան, որոնք ի թիվս աուդիտի համար էական նշանակություն ունեցող այլ փաստաթղթերի 2023թ փետրվարի 20-ին քննչական գործողությունների իրականացման արդյունքում առգրավված են եղել ՀՀ քննչական կոմիտեի կողմից և աուդիտորական առաքելության ընթացքում հասանելի չեն եղել Ընկերությանը, հետևաբար, նաև չեն տրամադրվել Աուդիտորին՝սահմանափակելով աուդիտորական գործողության շրջանակը:

Ընկերության ունեցած կրեդիտորական պարտքերը 2023 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված են 6.132.748 հազար դրամ գումարով, իսկ դեբիտորական պարտքերը՝ 813.182 հազար դրամ գումարով: Մեր կողմից Ընկերության կրեդիտորներից ստացված արտաքին հաստատումներով 31.12.2023թ դրությամբ ձեռք է բերվել ապացույցներ առկա 573.792 հազար դրամի կրեդիտորական պարտքերի վերաբերյալ և 276.886 հազար դրամի դեբիտորական պարտքերի վերաբերյալ: Արդյունքում մենք չենք կարողացել որոշել արդյոք անհրաժեշտ կլինեին կատարել կրեդիտորական պարտքի և դեբիտորական պարտքի արտացոլված կամ չարտացոլված գումարների ճշգրտումներ, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության,սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության տարրերի ճշգրտումներ:

Ընկերությունը ունի թվով 41 վարձակալած առևտրային տարածքներ՝ տարեկան 853.761 հազար դրամի վարձակալական վճարով: Վարձակալած տարածքների հաշվառումը չի վարվել համաձայն ՖՀՄՍ 16-ի պահանջների,այլ հաշվառվել է որպես գործառնական վարձակալություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

28 հունիսի 2024թ.

Գլխավոր տնօրեն՝ *Մ. Պետրոսյան*

Աուդիտոր *Ա. Միսիթարյան*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Նոր Զովք» ՍՊԸ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծանոթագրություն	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	717 529	772 747
Ոչ նյութական ակտիվներ		-	856
Հետաձգված հարկային ակտիվներ		19 096	19 096
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**736 625**	**792 699**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	3 608 924	3 373 224
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	1 419 149	11 338 916
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	989 730	282 830
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**6 017 803**	**14 994 970**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**6 754 428**	**15 787 669**
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Համալրված բաժնետիրական կապիտալ	8	253 112	253 112
Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)		(3 245 651)	5 655 991
Ընդամենը սեփական կապիտալ		**(2 992 539)**	**5 909 103**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	9	-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	9	3 182 445	670 129
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	6 457 268	9 102 348
Պահուստներ	11	107 254	106 089
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**9 746 967**	**9 878 566**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**6 754 428**	**15 787 669**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 28-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-18)

Տնօրեն

Ռ. Ալիխանով

Գլխավոր հաշվապահ

Ս. Սարգսյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Նոր Զովք» ՍՊԸ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծանոթագրություն	2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	12	58 965 672	54 521 440
Վաճառքի ինքնարժեք	12	(49 723 534)	(46 636 000)
Համախառն շահույթ (վնաս)		**9 242 138**	**7 885 440**
Իրացման ծախսեր	13	(5 498 382)	(4 049 234)
Վարչական ծախսեր	14	(818 237)	(674 261)
Այլ եկամուտներ	15	10 737	12 248
Այլ ծախսեր	15	(11 422 276)	(598 139)
Այլ օգուտ (կորուստ)	16	30 191	37 681
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		**(8 455 829)**	**2 613 736**
Շահութահարկի գծով ծախս	17	(445 813)	(486 999)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		**(8 901 642)**	**2 126 737**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(8 901 642)**	**2 126 737**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-18)

Տնօրեն

Ռ. Ալիխանով

Գլխավոր հաշվապահ

Ս. Սարգսյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Նոր Զովք» ՍՊԸ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2022թ հունվարի 1-ի դրությամբ	**253 112**	**268 574**	**521 686**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	2 126 737	2126737
Նախորդ տարիների չբաշխված շահույթի Ճշգրտում	-	3 260 680	3 260 680
Հայտարարված շահաբաժիներ	-		-
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**253 112**	**5 655 991**	**5 909 103**
2023թ հունվարի 1-ի դրությամբ	**253 112**	**5 655 991**	**5 909 103**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	(8 901 642)	(8 901 642)
Հայտարարված շահաբաժիներ	-	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**253 112**	**(3 245 651)**	**(2 992 539)**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-18)

Տնօրեն

Ռ. Ալիխանով

Գլխավոր հաշվապահ

Ս. Սարգսյան

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Նոր Զովք» ՍՊԸ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**282 830**	**1 021 096**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	67 924 635	58 015 948
Այլ մուտքեր	828	2 813
Վճարում աշխատակիցներին և նրանց անունից	(2 170 354)	(1 694 819)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(59 971 477)	(54 453 998)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ	(6 139 288)	(1 583 871)
Վճարված վարձավճարներ	(911 863)	(739 551)
Այլ վճարումներ	(319 431)	(99 777)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(1 586 950)**	**(553 255)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտք	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումների գծով վճարներ	**(220 376)**	**(342 350)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(220 376)**	**(342 350)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	3 139 212	496 204
Վարկերի և փոխառությունների մարումներ	(627 036)	(354 800)
Վճարված շահաբաժիններ	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	2 512 176	141 404
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	704 850	(754 201)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	2 050	15 935
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**989 730**	**282 830**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-18)

Տնօրեն

Ռ. Ալիխանով

Գլխավոր հաշվապահ

Ս. Սարգսյան